

## ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ (ՀՀ ՎՊԽ) ՆԻՍԵՐ

**20.07.2015թ. նիստին**

### **Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԽ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԽ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Լ.Պետրոսյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԽ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

### **Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի պետ Ա.Անանյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Լ.Գրիգորյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ.Եղիազարյանը,  
ՀՀ ԱՎԾ գյուղատնտեսական համատարած հաշվառման վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների և ծրագրավորման բաժնի պետ Ռ.Հովհաննիսյանը,

### **Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 37-Ն, թիվ 38-Ն, թիվ 39-Ն և թիվ 40-Ն որոշումներով հաստատված պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերում և լրացման հրահանգներում փոփոխություններ և լրացումներ կատարելուն հավանություն տալու մասին» հարցը.

*/Ձեկուցող՝ Ա.Ավագյան /*

### **Որոշեցին՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 37-Ն, թիվ 38-Ն, թիվ 39-Ն և թիվ 40-Ն որոշումներով հաստատված պետական վիճակագրական ամփոփ հաշվետվությունների ձևերում և լրացման հրահանգներում կատարված փոփոխություններն և լրացումները:

*/ Նորմատիվ /*

2.«Բուսաբուծական մթերքի արտադրությունը 20\_\_ թ.» թիվ 1 (տարեկան) հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

### **Որոշեցին՝**

Հաստատել «Բուսաբուծական մթերքի արտադրությունը 20\_\_ թ.» թիվ 1 (տարեկան) հարցաթերթը և լրացման հրահանգը համաձայն հավելված 1-ի և 2-ի:

*/Անհատական/*

3. «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. դեկտեմբերի 29-ի «Էլեկտրահաշվեկշիռ, էներգետիկ սարքավորումների կազմը և հաշվետվություն էլեկտրակայանների (էլեկտրագեներատորային տեղակայանքների) աշխատանքի մասին» Ձև թիվ 24–էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 22-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Անանյան/*

### **Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել «ՀՀ վիճակագրության պետական խորհրդի 2004թ. դեկտեմբերի 29-ի «Էլեկտրահաշվեկշիռ, էներգետիկ սարքավորումների կազմը և հաշվետվություն էլեկտրակայանների (էլեկտրագեներատորային տեղակայանքների) աշխատանքի մասին» Ձև թիվ 24–էներգետիկա (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և դրա լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 22-Ն որոշումը»:

*/Նորմատիվ/*

### **4. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

4.1. Հաղորդում՝ Ֆինլանդիայի Հանրապետության Հելսինկի քաղաքում 2015 թվականի հունիսի 10-ից 12-ը «Աշխատանքի շուկայում պահանջարկի սպասումների կանխատեսման և առաջարկի հետ համապատասխանեցման ինտեգրացված և ցանցային մոտեցումները ԵՄ և Արևելյան գործընկերության տարածաշրջանում» խորագրով սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Լ.Քալանթարյան/*

4.2. Հաղորդում՝ Մոլդովայի Քիշինև քաղաքում 2015 թվականի հունիսի 17-ից 18-ը ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) կողմից կազմակերպված կոնֆերանսին, գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ, մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ա.Ավագյան, Լ. Գրիգորյան/*

4.3. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015 թվականի հունիսի 29-ից հուլիսի 3-ը «Ավստրիայի ազգային վիճակագրական ծառայության և Ավստրիայի Գյուղատնտեսության նախարարության կողմից կազմակերպված՝ «Գյուղատնտեսական համատարած հաշվառման վերաբերյալ» հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Ս.Մնացականյան, Գ.Գևորգյան, Գ.Անանյան, Ա.Սաֆյան, Ա.Ավագյան,  
Ռ.Հովհաննիսյան, Լ.Գևորգյան/*

4.4. Հաղորդում՝ Ալբանիայի Դյուրես քաղաքում 2015 թվականի հուլիսի 2-ից 3-ը «Եվրոպական վիճակագրության փորձառության օրենսգիրք» թեմայով աշխատանքային հանդիպմանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ. Եղիազարյան/*

4.5. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի հուլիսի 3-ին ՄԱԿ-ի Եվրոպական Տնտեսական Հանձնաժողովի (ՄԱԿ-ի ԵՏՀ) Բնապահպանական մշտադիտարկման և գնահատման հատուկ աշխատանքային խմբի (ԲՄԳՀԱԽ) առաջին խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան/*

**19.08.2015թ. նիստին**

**Մասնակցում էին՝**

ՀՀ ՎՊԻՆ նախագահ Ս.Մնացականյանը, ՀՀ ՎՊԻՆ անդամներ՝ Գ.Անանյանը, Գ.Գևորգյանը, Ա.Սաֆյանը, Վ.Դավթյանը, Յու. Պողոսյանը, ՀՀ ՎՊԻՆ քարտուղար՝ Հ. Գրիգորյանը.

**Հրավիրված էին՝**

ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ Լ.Միրզոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար Ա.Հայրապետյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Վ.Սարոյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի գյուղատնտեսության վիճակագրության բաժնի պետ Ա.Ավագյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ.Մարտիրոսովան,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ.Քալանթարյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ.Կույումջյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի արդյունաբերության վիճակագրության բաժնի գլխավոր մասնագետ Հ.Հակոբյանը,  
ՀՀ ԱՎԾ աշխատակազմի իրավաբանական բաժնի առաջատար մասնագետ Գ.Հովսեփյանը,  
ՀՀ ԱՎԾ պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրման ծրագրի «Աշխատուժի ընտրանքային հետազոտություն» ծրագրի ղեկավար Տ.Գևորգյանը:

**Նիստում լսվեցին հետևյալ հարցերը.**

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի թիվ 28-Ն և թիվ 29-Ն որոշումներով հաստատված «Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1 «Համայնքի գիրք» և «Հաշվառման ձև թիվ 2 «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակ» ձևաթղթերում և թիվ 31-Ն որոշմամբ հաստատված «Գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1 «Համայնքի գիրք», ձև թիվ 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» և տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3 «Այբբենական գիրք» վարելու ցուցումներում փոփոխություններ կատարելուն հավանություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

### **Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2010 թվականի հոկտեմբերի 4-ի «Տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1 «Համայնքի գիրք» ձևաթուղթը հաստատելու մասին» թիվ 28-Ն, «Հաշվառման ձև թիվ 2 «Գյուղական համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» հաստատելու մասին» թիվ 29-Ն և «Գյուղական համայնքներում տնտեսությունների հաշվառման ձև թիվ 1 «Համայնքի գիրքը», ձև թիվ 2 «Համայնքի տարածքում ժամանակավոր բնակվող անձանց ցուցակը» եվ տնտեսությունների հաշվառման ձև թիվ 3 «Այբբենական գիրքը» վարելու ցուցումները» հաստատելու մասին» թիվ 31-Ն որոշումներում «անասուններ» բառը և դրա բոլոր հոլովածները համապատասխանաբար փոխարինել «գյուղատնտեսական կենդանիներ» բառերով և դրանց համապատասխան հոլովածներով: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

*/Նորմատիվ/*

2. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Գյուղատնտեսական մթերքի իրացումը» թիվ 3 (տարեկան) ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 128-Ն և «Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընթացիկ ծախսերը» թիվ 4 տարեկան հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին թիվ 129-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու և «Տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքի արտադրության վրա կատարված ծախսերը 20 թ.» թիվ 4 (տարեկան) հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» հարցը.

*/Զեկուցող՝ Ա.Ավագյան/*

### **Որոշեցին՝**

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 9-ի «Գյուղատնտեսական մթերքի իրացումը» թիվ 3 (տարեկան) ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 128-Ն և «Գյուղատնտեսական արտադրանքի արտադրության ընթացիկ ծախսերը» թիվ 4 (տարեկան) ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 129-Ն որոշումները և հաստատել՝ «Տնտեսությունների կողմից գյուղատնտեսական մթերքի արտադրության վրա կատարված ծախսերը 20 թ.» թիվ 4 (տարեկան) ընտրանքային հետազոտության հարցաթերթը և լրացման հրահանգը համաձայն հավելվածներ 1-ի և 2-ի:

*/Նորմատիվ, անհատական/*

3. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրելու թույլտվություն տալու մասին» հարցը.

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

### **Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008-2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

4. «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից՝ 2008 և 2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության անվանազերծված տվյալների բազաները «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ նախագահ Վահրամ Ավանեսյանին տրամադրելու թույլտվություն տալու մասին» հարցը:

*/Զեկուցող՝ Դ.Մարտիրոսովա/*

### **Որոշեցին՝**

Թույլատրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնին՝ «ԱՎԱԳ Սոլյուշնս» ՍՊԸ նախագահ Վահրամ Ավանեսյանին տրամադրել Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կողմից 2008 և 2013 թվականներին իրականացված տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտության արդյունքում ձևավորված անվանազերծված տվյալների բազաները՝ զուտ գիտահետազոտական աշխատանքների իրականացման համար օգտագործելու, այլ անձանց չփոխանցելու, չվաճառելու, չհրապարակելու և այլ կարգով չտարածելու պայմաններով:

*/Անհատական/*

**5. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

5.1. Հաղորդում՝ Ավստրիայի Հանրապետության Վիեննա քաղաքում 2015 թվականի հունիսի 29-ից հուլիսի 10-ը ԱՄՀ հրավերով Վիեննայի Միացյալ ինստիտուտում «Ազգային հաշիվների վիճակագրություն» խորագրով դասընթացին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Տ.Գևորգյան/*

5.2. Հաղորդում՝ Մոլդովայի Հանրապետության Քիշնև քաղաքում 2015 թվականի հունիսի 30-ից հուլիսի 1-ը ««Ինոգեյթ» ծրագրի շրջանակում կազմակերպված գործընկեր երկրներում իրականացված առաքելության հիմնական արդյունքների, նախատեսված և կատարված աշխատանքների շրջանակների ներկայացումն ու քննարկումը գործնական աշխատանքներին» մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Հ.Հակոբյան/*

5.3. Հաղորդում՝ Շվեյցարիայի Ժնև քաղաքում 2015 թվականի հուլիսի 6-ից 10-ը ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի «Մանկական հաշմանդամության չափումը» խորագրով տարածաշրջանային սեմինարին մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցող՝ Գ.Գևորգյան/*

5.4. Հաղորդում՝ Ղրղզստանի Բիշքեկ քաղաքում 2015 թվականի օգոստոսի 4-ից 6-ը «Աշխատուժի և մարդահամարի շրջանակում աշխատանքի շուկայի և աշխատանքային միգրացիայի հիմնական ցուցանիշների չափման հետ կապված խնդիրները» խորագրով խորհրդակցությանը մասնակցելու վերաբերյալ:

*/Զեկուցողներ՝ Լ.Միրզոյան, Կ.Կոյունջյան, Լ.Քալանթարյան/*